ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/80

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.06.2019թ. թիվ 26/26-1/9259-2019 գրությամբ «Լուվա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 31.05.2019թ. թիվ Ե/40/1275-19 գրության հիման վրա, 04.06.2019թ. թիվ 26/26-1/9259-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Լուվա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Լուվա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Լուվա» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/80 ընթացակարգի շրջանակներում 11.06.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 31.05.2019թ. թիվ Ե/40/1275-19 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից պաշտպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լուվա» ՍՊԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2018թ. թիվ 2.1 որոշմամբ թիվ 3, 6, 20, 21, 22, 23, 27, 29, 31 չափաբաժինների համար Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և առաջարկվել է եռօրյա ժամկետում ներկայացնել հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովի 25.06.2018թ. թիվ 3 որոշմամբ հանձնաժողովն արձանագրել է «Լուվա» ՍՊԸ-ի որակավորումը հիմնավորող փաստաթղթերում մի շարք անհամապատասխանություններ հրավերին, մասնավորապես՝

1. Ընկերությունը 27-րդ չափաբաժնի համար պետք է ներկայացներ նմանատիպ պայմանագիր, որը չի ներկայացրել:
2. Ընկերության կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի և նմուշների ուսումնասիրության արդյունքում, արձանագրվել է՝

• Թիվ 27 չափաբաժնի համար ներկայացված նմուշի թույլատրելի առավելագույն կոնցետրացիան ՊԴԿ չի համապատասխանում հայտում նշված չափսին՝ հայտում նշված է 50 և ավելի, իսկ Ընկերության առաջարկած նմուշի փաթեթավորման վրա նշված է 20,

• Արտաշնչման փականը կողքից է, իսկ հրավերով սահմանված է, որ պետք է լինի դիմացից, այն ընդունելի չէ, քանի որ բարձր ջերմաստիճանով պայմաններում աշխատելու ժամանակ կհանգեցնի միակողմանի քրտնելու.

• Հրավերում աշխատանքային միջավայրը նշված է -30-ից +70, փաթեթավորման վրա միջակայքը նշված է 0-ից 50:

3. Թիվ 29 չափաբաժնի համար ներկայացված բնութագրում նշված չէ աշխատանքային միջավայրի թույլատրելի ջերմաստիճանը:

Գնահատող հանձնաժողովի 25.06.2018թ. թիվ 3 որոշմամբ առաջարկվել է Ընկերությանը շտկել որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի 10.07.2018թ. թիվ 3.1 որոշմամբ հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Լուվա» ՍՊԸ-ն չի ներկայացրել հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը և անբավարար է գնահատել Ընկերության որակավորող փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/80 ընթացակարգի շրջանակներում 11.06.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/80 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/80 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար 14.05.2018թ. կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Լուվա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով «Լուվա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լուվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ: Ընկերությանը ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.07.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել անհամապատասխանությունները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.06.2019թ. թիվ 26/26-1/9259-2019 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 31.05.2019թ. թիվ Ե/40/1275-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Այսպիսով՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտարարությունը և հրավերը www.gnumner.am կայքում հրապարակվել է 14.05.2018թ.:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Լուվա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի մի շարք չափաբաժինների

մասով «Լուվա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լուվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ. մասնավորապես՝ Ընկերությունը 27-րդ չափաբաժնի համար պետք է ներկայացներ նմանատիպ պայմանագիր, որը չի ներկայացրել:

Ընկերության կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի և նմուշների ուսումնասիրության արդյունքում, արձանագրվել է, որ

- Թիվ 27 չափաբաժնի համար ներկայացված նմուշի թույլատրելի առավելագույն կոնցետրացիան ՊԴԿ չի համապատասխանում հայտում նշված չափսին՝ հայտում նշված է 50 և ավելի, իսկ Ընկերության առաջարկած նմուշի փաթեթավորման վրա նշված է 20,
- Արտաշնչման փականը կողքից է, իսկ հրավերով սահմանված է, որ պետք է լինի դիմացից, այն ընդունելի չէ, քանի որ բարձր ջերմաստիճանով պայմաններում աշխատելու ժամանակ կհանգեցնի միակողմանի քրտնելու.
- Հրավերում աշխատանքային միջավայրը նշված է -30-ից +70, փաթեթավորման վրա միջակայքընշված է 0-ից 50:

4. Թիվ 29 չափաբաժնի համար ներկայացված բնութագրում նշված չէ աշխատանքային միջավայրի թույլատրելի ջերմաստիճանը:

Ընկերությանը ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի **10.07.2018թ. ժամը 16:00-ի** նիստի թիվ 3.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է այն հիմանվորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել անհամապատասխանությունները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանութ-յունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

14.05.2018թ. կազմակերպված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթի մասնակից «Լուվա» ՍՊԸ-ն հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների

պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը **10.07.2018թ.** ժամը 16:00-ի նիստի թիվ 3.1 արձանագրությամբ կայացրած որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է, քանի որ Ընկերության կողմից չի ներկայացվել հրավերով պահանջվող նմանատիպ պայմանագիրը, իսկ ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին, որը չի շտկվել նաև Ընկերությանը ծանուցելուց հետո:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը սահմանում է, որ **Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին,** որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները, ինչպես նաև սույն ընթացակարգի վերաբերյալ www.gnumner.am կայքում հրապարակված տեղեկատվությունը, արձանագրում եմ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ որպես պատվիրատուի կողմից խախտվել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ մասնակցի տվյալները)

լիազորված մարմին ներկայացնելու Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը: Մասնավորապես՝ Կարգի 45-րդ կետը սահմանում է, որ մասնակցի վերաբերյալ տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացվում են լիազորված մարմին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, մինչդեռ նշված հիմքերն ի հայտ են եկել դեռևս **10.07.2018թ.,** երբ գնահատող հանձնաժողովը համապատասխան հիմնավորմամբ մերժել է «Լուվա» ՍՊԸ-ի հայտը, մինչդեռ Պատվիրատուն «Լուվա» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է միայն **31.05.2019թ.՝ մոտ 10 ամիս անց:**

Նման պայմաններում, ելնելով Կարգի 45-րդ կետի պահանջից, ինչպես նաև հաշվի առնելով գնումների գործընթացի մասնակիցների՝ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքների և օրինական շահերի պահպանման անհրաժեշտությունը, մասնակիցների՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը ներկայացնելու և դրանք ուսումնասիրելու համար օրենսդրորեն սահմանված սեղմ ժամկետների ինքնանպատակ չլինելը, գտնում եմ, որ առկա չեն «Լուվա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ հնարավոր չէ արձանագրել Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.06.2019թ. թիվ 26/26-1/9259-2019 գրությամբ «Լուվա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ